Մ. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԸ ՔՈՒՐԴ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍԻՆ

Դարեր շարունակ Անդրկովկասում միմյանց հետ խառն ապրում ու աշխատում են տասնյակ ազգեր, ժողովրդական ու ազգային խմբեր։ Նրանց ուշադրությունը հեղափոխական շարժումներից շեղելու նպատակով ցարական կառավարությունը հրահրում էր ազգամիջյան կռիվներ ու թշնամություն։ Ցարիզմի այդ ռեակցիոն քաղաքականությանը իրենց գործունեությամբ նպաստում էին բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունները՝ դաշնակցականները, մենշևիկները, մուսավաթականները և այլն։

Այդպիսի պայմաններում բոլշևիկների կուսակցության ազգային ծրագիրը ծայրամասերում ապրող բոլոր ճնշված ազգություններին գրավում էր ազգային ճնշման դեմ պայքարող պրոլետարիատի կողմը և նպաստում պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով բանվոր դասակարգի դաստիարակությանը։

Ցարական Ռուսաստանի ետամնաց ծայրամասերից մեկում՝ Անդրկովկասում, տեղի կոնկրետ պայմաններից ելնելով, լենինյան ազգային ծրագրի պաշտպանության ու հիմնավորման համար մեծ աշխատանք է կատարել Ստ. Շահումյանը։ Վ. Ի. Լենինը, չնայած բարեկամական որոշ դիտողություններ անելով Շահումյանին, բարձր էր գնահատում ազգային հարցի մասին նրա աշխատությունները։

Ստ. Շահումյանը Կովկասի աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակությանը և նացիոնալիզմի դեմ մղվող պայքարին տալիս էր առանձնահատուկ նշանակություն։ Ցարական կառավարության, անդրկովկասյան նացիոնալիստների և սոցիալ-շովինիստների հրահրած ազգամիջյան կռիվներին նսհակադրում էր մարքսիստական ինտերնացիոնալիզմը, ժողովուրդների բարեկամությունը, բոլոր ազգերի աշխատավորների շահերի պաշտպանությունը։

Իր աշխատություններում Շահումյանը տարբեր առիթներով անդրադարձել է նաև քուրդ ժողովրդի պաշտպանության հարցերին։ Եվ առհասարակ, մարդկային հասարակության զարգացման պատմության վերաբերյալ քրդական կյանքից նրա բերած օրինակները, համեմատությունները և վերլուծությունները ցույց են տալիս, որ նա խորապես հետաքրքրվել ու իմացել է դարերով ճնշված այդ ժողովրդի անցյալն ու ներկան, մեծ հավատով է լցված եղել նրա ապագայի նկատմամբ։

Մ. Գորկու խմբագրությամբ 1916 թ. Մոսկվայում ռուսերեն լեզվով լույս տեսավ «Հայ գրականության ժողովածուն»։ Ողջունելով Ռուսաստանում ապրող մանր ազգերի գրական ստեղծագործությունների տեսությանը նվիրված այդ առաջին ժողովածուի հանդես գալը, Շահումյանը միաժամանակ քննադատում է նրանում տեղ գտած թերությունները։ Նա պարսավանքի է ենթարկում հատկապես ժողովածուին կցված «Հայկական հարցը Ռուսաստանում» և «Հայ

գրականության ակնարկ» հոդվածների հեղինակներ Ռ. Անանունին ու Պ. Մակինցյանին։ Առաջինին նա քննադատում է ժամանակի հայ հրապարակախոսության հատուկ լալկան-տիրացուական ոգու և ոճի, երկրորդին՝ նույն ժամանակի մտավորականությանը բնորոշ ազգային պարծենկոտության համար։

Ակնարկելով վերջին հարյուր տարվա ընթացքում հայ ժողովրդի ստեղծած կուլտուրական արժեքները, իր հոդվածում Պ. Մակինցյանը պարծենկոտ կերպով բացականչում է· «Իսկ ի՞նչ են տվել... անդրկովկասյան քրդերը։ Նրանք մեր աչքի առաջ նոր-նոր միայն անցնում են նոմադական կյանքից դեպի նստակյաց կյանքը և սովորում են հողագործություն»։

Շահումյանը նշում է, որ պատմական զարգացումը հարթ և ուղիղ-վերընթաց գծով չի ընթանում։ Եթե որոշ ժողովուրդներ քաղաքականության ասպարեզում խիստ ետ են մնացել, ապա այդ նրանց ոչ թե մեղքն է, այլ դժբախտությունը։ Չէ՞ որ դրա համար եղել են համապատասխան պատճառներ։ Նման օբյեկտիվ պատճառներից ժամանակին շատ է տուժել նաև հայ ժողովուրդը։ Մինչդեռ, դավանելով «մեր տնաբույս սոցիոլոգներին» սաղական «հայի ցեղային հանճարի» մասին «մանկական թեորիան», «պարոն Մակինցյանը անգիտակցաբար հարկ է հատուցանում հայկական ավանդական մեծամտությանն ու անբարտավանությանը»[1]։

Ներկայումս Սովետական Հայաստանում ապրող քրդերի օրինակը ցույց է տալիս, թե որքան իրավացի էր Շահումյանը, երբ ավելի քան կես դար առաջ գրում էր այդ խոսքերը։ Սոցիալիստական առաջադեմ հասարակարգը պայմաններ է ստեղծում նախկինում ետ մնացող ազգությունների, նույն թվում և քրդերի, տնտեսության և կուլտուրայի զարգացման ու ծաղկման համար։ Հակառակ դրան, բուրժուական երկրներում, օրինակ Իրաքում, ապրող քրդերը ոչ միայն չեն կարող անարգել զարգացնել իրենց գիտությունը, կուլտուրան ու արվեստը, մյուս ազգերի հետ համահավասար մասնակցել երկրի կառավարմանը, այլև կանգնած են ֆիզիկական բնաջնջման սպառնալիքի առաջ։

Իրենց «ազգասեր» հռչակող և բոլշևիկներին «ազգի դավաճաններ» անվանող դաշնակցականներն ու հնչակյանները ամեն ջանք գործ էին դնում հարևան ազգերից հայ ժողովրդին մեկուսացնելու, նրան բոլորի հետ թշնամացնելու և, ինչպես Շահումյանն է նշում, «հող պատրաստելու սուլթանի ու Նիկոլայ Ռոմանովի դժոխային ծրագրերը իրականացնելու համար»։ Հակադրվելով այդ պիսիներին, Շահումյանը հայերին խորհուրդ էր տալիս «խելոք և հեռատես քաղաքականությամբ ձգտել որքան կարելի է համերաշխ ապրել հարևանների՝ հայերի նման և հայերից էլ ետամնաց դժբախտ քուրդ... և մյուս ժողովուրդների հետ»[2]։

Շահումյանը նշում է, որ հայերի դժբախտության, կոտորածների ու ավերումների պատճառը ոչ թե հարևան ժողովուրդներն են, այլ ինչպես իր մահից մեկ տարի առաջ՝ 1894 թ. հայերին նախազգուշացնում էր Ֆ. Էնգելսը. «տաճիկ բռնակալության Սցիլլայի և ռուսական ցարիզմի Խարիբդայի արանքում» լինելը։ Շահումյանը գտնում էր, որ Անդրկովկասի ժողովուրդների երջանկությունը կոփելու համար պետք է պայքարն ուղղել այդ բռնակալությունների դեմ։

---

1 Ս տ. Շ ա հ ո ւ մ յ ա ն, Երկեր, հ. 2, էջ 378—379։
2 Նույն տեղում. էջ 408։

Մեծ Հոկտեմբերը Ռուսաստանը պոկեց իմպերիալիզմի շղթայից։ Սակայն, չնայած ժողովրդական տնտեսության քայքայվածությանը, իմպերիալիստները «մինչև հաղթական վախճանը» հասցնելու ակնկալությամբ շարունակում էին համաշխարհային պատերազմը։ Այդ առիթով հիշեցնելով թուրքական գենոցիդի 1915 թվականի հայ զոհերին, Շահումյանը նշում էր. «...Ռուսական զորքերի ետ քաշվելու լուրը առաջ կբերի հարազատ վայրերից փախած, մի կողմից թուրքերի ու քրդերի, մյուս կողմից՝ հայերի շարժում։ Իմանալով իրերի դրությունն այդ դժբախտ երկրում, մենք պետք է հավատացած լինենք, որ այնտեղ մի նոր դժոխք է ստեղծվում, անմեղ խաղաղ բնակչության արյան նոր գետեր են հոսելու»[3]։

Ստ. Շահումյանը կովկասյան բանակի ետ քաշվող զորքերի զինվորներին կոչ էր անում չլսել պաշտպանողականներին, որոնք բանակը պատկերացնում են իբրև ջարդարարների բանդա, չենթարկվել նացիոնալիստների պրովոկացիաներին։ Ետ քաշվող զորքերը պետք է գնան խաղաղ, կազմակերպված, «չսարքելով ոչ մի էքսցես ու բռնություն»։ «Գյուղացիները,— գրում էր նա,— հայերը, քրդերը, մուսուլմանները, որոնք ապրում են այդ երկրում, և նրանք, որոնք կհանդիպեն ետ քաշվող զորքերի անցման ճանապարհին, նույնպիսի եղբայրական վերաբերմունքի են արժանի մեր կողմից, ինչպես և ռուս գյուղացիները, ձեր հայրերը, ձեր կանայք ու քույրերը»[4]։

Տաղանդավոր մարքսիստի կանխագուշակությունն իրավացի էր։ Կովկասյան պաշտպանողականների նացիոնալիստական ու հակահեղափոխական քաղաքականության հետևանքով ամենուրեք տուժում էին ժողովրդական զանգվածները, Անդրկովկասը վեր էր ածվել ազգամիջյան կռիվների թատերաբեմի։ Այդ դրությանը վերջ տվեց միայն Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում սովետական իշխանության հաղթանակը։ Կոմունիստական կուսակցության լենինյան քաղաքականության շնորհիվ մեր երկրում ապրող բոլոր ազգերն ու ժողովուրդները համախմբվեցին ռուս մեծ ժողովրդի շուրջը և սկսեցին կերտել իրենց նոր՝ ձևով ազգային, բովանդակությամբ՝ սոցիալիստական կուլտուրան։

Այժմ, երբ մեկընդմիշտ ապահովված է մեր երկրի ժողովուրդների բարոյա-քաղաքական անխախտ միասնությունը, և քրդերը եղբայրական մյուս ազգերի հետ միասին կերտում են կոմունիզմի հոյակապ կոթողը, կարծես նոր ուժով են հնչում բոցաշունչ բոլշևիկ Շահումյանի ավելի քան կես դար առաջ արտահայտած մտքերը՝ ազգային հակասությունները կվերանան միայն այն ժամանակ, երբ վերջ կդրվեն կապիտալիստական կարգերին, երբ աշխատանքը կաղատագրվի կապիտալի լծից։

---

3 Ստ. Շահումյան, երկեր, հ. 3, էջ 38։
4 Նույն տեղում, էջ 38—39։